ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

« 26 » « սեպտեմբերի » 2023թ.

«ԼԵՈ Ա» ՍՊԸ –ի տնօրեն
Լ. Աղաբեկյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(Շտկում)

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Աղաբեկյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի միջև 06.02.2023թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/10-1-ԵԽ-8-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնմանվ - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

«ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և այն համարելով լուծված 178970.45 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ինը հարյուր յոթանասուն դրամ, քառասունհիգ լումա) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին տրվում է 10 օրացուցային օր տուժանքով սահմանված և պայմանագրի ապահովման 47260 /քառասունյոթ հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 70890 /յոթանասուն հազար ութ հարյուր ինսուն/ ՀՀ դրամը գումարները «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 900018001553 հաշվեհամարին փոխանցելու նպատակով: Սահնված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նեռառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանգրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ